**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 968.1-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «(ֆոնդի կառավարչի)» բառերից հետո հանել «հրապարակած» բառը:

2) 5-րդ մասում «Ֆոնդի կառավարիչը» բառերը փոխարինել «Ֆոնդի կառավարումն իրականացնող անձը կամ կառավարիչը (այսուհետ սույն գլխում՝ կառավարիչ)» բառերով:

3) 8-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Օրենքով կարող են սահմանվել ոչ հրապարակային ֆոնդերի կառավարման պայմանագրերի նկատմամբ այլ պահանջներ:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 968.10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ֆոնդի կանոնների փոփոխությունն իրականացնում է ֆոնդի կառավարիչը՝ ֆոնդի բոլոր փայերի 50 տոկոսից ավելի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում, ֆոնդի կանոնների՝ իր իրավունքների սահմանափակմանը հանգեցնող փոփոխության կամ այլ էական փոփոխության համար իր համաձայնությունը չտված ֆոնդի մասնակիցն իրավունք ունի ողջամիտ ժամկետում լուծելու ֆոնդի կառավարման պայմանագիրը: Օրենքով կարող է նախատեսվել հրապարակային ներդրումային ֆոնդի կանոնների փոփոխման այլ կարգ:»

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: